

ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ընդհանրապես համանունությունը լեզվի մեջ հանդես եկող հայտնի երևույթներից է՝ դիտված ու բնութագրված լեզվաբանական գիտության կողմից: Դա լեզվական տարիմաստ միավորների ձևային-հնչյունական համընկնումն է: Ըստ այդմ՝ համանունները լեզվական իմաստակիր երկու կամ ավելի այնպիսի միավորներ են, որոնք համընկնում են ձևով, բայց տարբերվում են արտահայտած իմաստով կամ նշանակությամբ:

Եվ քսնի որ լեզուն ունենում է տարբեր բնույթի ու արժեքի միավորներ, ուստի համանունությամբ կարող են հանդես գալ լեզվական տարբեր մակարդակների միավորներ:

Ըստ համանուն միավորների լեզվական արժեքի՝ ընդհանուր առմամբ գիտության մեջ տարբերում են բառային և քերականական համանունություններ, այսինքն՝ ըստ ձևային համընկումների ու առհասարակ լեզվի մեջ ունեցած դրսևորումների՝ բացարձակ կամ լիակատար և մասնակի, ըստ առաջացման հիմունքների՝ համաժին (հոմոգեն) և տարաժին (հետերոգեն) և այլք: Էլ չենք խոսում ավելի մանրատված ենթատեսակների մասին:

Ընդհանուր լեզվաբանական գրականության մեջ զգալի տեղ է տրվել համանունության քննությանը: Տարբեր լեզուների համապատասխան փաստերի ուսումնասիրությամբ ստեղծվել է շոշափելի քանակի գրականություն: Նկատենք, սակայն, որ ավելի շատ խոսվել է բառային համանունության, քան քերականականի մասին: Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ սովետական մասնագետները ևս չեն անտեսել համանունությունն ընդհանրապես: Դասագրքերի ու ձեռնարկների համապատասխան բաժիններից բացի, գրվել են և առանձին ուսումնասիրություններ¹:

Ներկա հոդվածում մենք չենք քննելու համանունության երևույթն ընդհանրապես: Այստեղ մեզ հետաքրքրողը քերականական համանունության հարցն է, այն էլ ըստ հայերենի ընձեռած փաստերի:

Հայերենագիտության մեջ համանունության մասին շատ չի գրվել: Դրական դասընթացներում համառոտ բնութագրումներով նշվել է բառային համանունների մասին²: Դրանից զատ ժամանակակից գրական հայերենի համանուն: բառերի առաջացման ուղիների մասին հանգամանորեն խոսել է Մ. Աբեղյանը³: Գրաբարի քերականություններում խոսվում է անվանական համանունների ու նրանց հոլովման մասին: Գ. Ջահուկյանը գրաբարի հոլովման համակարգին ու նրա առաջացմանը նվիրված իր մենագրության

¹ Այս մասին արժեքավոր տեղեկություններ կարելի է գտնել, օրինակ, «Вопросы языкознания» հանդեսի 1960 թ. № 5-ում, որի զգալի մասը նվիրված է համանունությանը:

² Հմմտ., օրինակ, Ա. Ղարիբյանի, Է. Աղայանի և Հ. Բարսեղյանի զարգացած դասագրքերը:

³ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 156—157:

հավելվածում բերում է համանուն արմատների ու արմատական բառերի ցանկը՝ այն օժտելով բառերի թեքմանը և ծագմանը վերաբերող նշումներով⁴։ Ժամանակակից դրական հայերենի համանուն բառերի մենագրական քննությունը նվիրվել է թեկնածուական մեկ դիսերտացիա⁵։ Հայերենի քերականական համանունության վերաբերյալ առանձին երևույթների կասկածաշուկամբ եղել են մասնակի անդրադարձներ ու բնութագրումներ⁶։

Սովետական լեզվաբանության մեջ քերականական համանունության բնութագրման և հանգամանալից քննության առաջին քայլերը կապված են նշանավոր սլավոնագետներ Լ. Ա. Բուլախովսկու, Վ. Վ. Վինոգրադովի անունների հետ⁷։ Այս գիտնականները և հետագայում հանդես եկած ուրիշները քերականական համանունության վերաբերյալ արտահայտել են արժեքավոր մտքեր ու դրույթներ, քննել և ցուցադրել են հետաքրքրական փաստեր։ Սակայն այս ուղղությամբ, հատկապես առանձին կոնկրետ լեզուների քերականական նյութի ուսումնասիրության տեսակետից դեռ շատ անելիք կա։ Դա մեծ չափով վերաբերում է և հայոց լեզվին, որի քերականական համանունության ուսումնասիրության միայն առաջին փորձերն են արվում վերջերս։

Ընդհանուր լեզվաբանության մեջ ժամանակակից հասկացողությամբ քերականական համանունություն է համարվում քերականական երկրորդական ձևույթների համանունությունը։ Ըստ այդմ՝ քերականական համանուններ են երկու կամ ավելի այնպիսի երկրորդական ձևույթները, որոնք հնչումով նույնն են, նշանակությամբ՝ տարբեր։ Օրինակ՝ ռուսերենում а-ն стола բառաձևում և а-ն жена բառում կամ անգլերենում՝ t-ն leapt և t-ն shalt բառաձևերում և այլն⁸։ Այդպես էլ՝ անգլերենի s ձևույթը որպես հոգնակիության և մեկ այլ s ձևույթ՝ որպես սեռական (ստացական-պոսեսիվ) հոլովի ցուցիչ և այլն։ Այդ ձևույթների մեջ արտահայտության կողմում ունենք ձևվային նույնություն, իսկ բովանդակության կողմում՝ տարիմաստություն։

Քանի որ այստեղ խոսքը վերաբերում է երկրորդական ձևույթներին, ուստի անհրաժեշտ է մի համառոտ անդրադարձ կատարել դրանց ըմբռնման վրա։ Լեզվաբանության մեջ ձևույթի դադափարը վերաբերում է լեզվի իմաստակիր միավորներին (իհարկե, ոչ բոլորին)։ Ձևույթները լեզվի ձևա-իմաս-

⁴ Գ. Բ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման համակարգը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 330—367։

⁵ Բ. Н. Шалауниц, Омонимы в современном армянском языке. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук, Ереван, 1972. Բացի ավտոռեֆերատից, հիշյալ աշխատությունից հրապարակվել են մի քանի հոդվածներ (հայերեն լեզվով)։

⁶ Հմմտ., օրինակ, է. Բ. Աղայանի «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը», Գ. Բ. Ջահուկյանի «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատությունների առանձին հատվածները։ Իրենց աշխատություններում ղանաղան առիթներով քերականական համանունության փաստեր են դիտել և նշել (թեև ոչ նույնպիսի որակումներով) Ա. Ղարիբյանը, Գ. Սեֆակը, տողերիս հեղինակը, Ա. Մարգարյանը և ուրիշներ։

⁷ Л. А. Булаховский, Из жизни омонимов. «Русская речь» под ред. Л. В. Щербы. Новая серия, III, Ленинград, 1928; В. В. Виноградов, О грамматической омонимии в современном русском языке. «Русский язык в школе», 1940, № 1; его же, Об омонимии и смежных явлениях. «Вопросы языкознания», 1960, № 5.

⁸ См. О. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1966, էջ 287։

տալին նվազագույն միավորներն են: Դրանք իմաստ ունեցող անտարրալուծելի միավորներ են: Այդպիսիները կարելի է տարրալուծել միայն հնչյունային-հնչույթային կողմով, որպիսի դեպքերում դադարում են իմաստակիր լինելուց: Ժամանակակից կառուցվածքային լեզվաբանական ուղղությունները լեզվի համակարգային կառուցվածքում տարբերում են ձևային առանձին մակարդակ: Սակայն բոլոր ձևա-իմաստային նվազագույն միավորները՝ ձև-վույթները, տառացիորեն նույն բնույթն ու արժեքը չունեն: Դրա համար էլ լեզվաբանությունը առաջարկում է ձևույթների երկու մեծ խումբ՝ հիմնական ձևույթներ և երկրորդական ձևույթներ: Հիմնական ձևույթները արմատներն են, որոնք ընդհանուր ձևով արտահայտում են առարկայական աշխարհին վերաբերող բազմապիսի հասկացություններ. դրանք բացառիկ գերակշռություն ունեն երկրորդական ձևույթների հանդեպ: Երկրորդական ձևույթներն արտահայտում են զանազան հարաբերություններ և ըստ այդմ էլ իրենց հերթին բաժանվում են երկու ենթատեսակների՝ բառակազմական և բառահարաբերական ձևույթների: Սրանք էլ զանազան հիմունքներով ներկայացվում են այլևայլ տեսակավորումներով և այլն:

Բանն այն է, որ մասնագետների մի զգալի մասը քերականական երկրորդական ձևույթ հասկացությանը տալիս է լայն բովանդակություն՝ նրա մեջ ներառելով բոլոր տեսակի երկրորդական ձևույթները (թե՛ բառակազմականները, թե՛ բառահարաբերականները): Այստեղից էլ քերականական համանունությունը շոշափելիս կարող են մեկ գծի վրա դրվել բառակազմական և բառահարաբերական (բուն իմաստով՝ քերականական) երկրորդական ձևույթները՝ իբրև նույն տիպի ձևույթներ: Բայց դա ճիշտ մոտեցում չի լինի: Բառակազմական երկրորդական ձևույթները (բառակազմական ածանցները), դրվելով հիմնական ձևույթների (արմատների) կամ բառերի վրա, նոր բառեր են կազմում: Ուրեմն՝ նրանց արժեքը բառակազմական է, բառեր կազմելն է: Հետևաբար համանունության հարցում նրանք պիտի զուգադրվեն միմյանց հետ: Քերականական երկրորդական ձևույթների էությունն էլ արտահայտվում է քերականական նշանակությունների գրսևորումով: Ուրեմն՝ սրանք էլ իրար հետ պիտի զուգադրվեն և այլն: Չեն բացառվում նաև միջանկյալ երկույթները: Չմոռանանք նշել, որ բառակազմական շատ ածանցներ, կերտելով բառեր, միաժամանակ կերտում են այլևայլ խոսքի մասեր: Այդ չափով (մանավանդ ուրիշ խոսքի մասերից նոր խոսքի մաս-բառեր կազմելիս) այդ ածանցները միաժամանակ քերականական դեր են կատարում. չէ՞ որ բառերը (այդ թվում և ածանցումով կազմվածները), պատկանելով այս կամ այն խոսքի մասին, այդ կողմով միաժամանակ հանդես են գալիս նաև որպես քերականական հասկացություններ: Նման դեպքերում էլ, այնուամենայնիվ, պետք է հստակորեն տարբերել բառակազմական և բառահարաբերական երկրորդական ձևույթները իրենց բուն արժեքով ու դերով՝ միաժամանակ շանտեսելով երկրնույթ երկույթները: Վերջիններս առանձին լեզուներում շատ հաճախ են հանդիպում: Օրինակ, ռուսերենում քիչ չէ այնպիսի ածանցների թիվը, որոնք ավելանալով բայի վրա, կերպային (քերականական) նոր իմաստ են արտահայտում, բայց և միաժամանակ նոր բառ են կերտում:

Մենք միանում ենք այն մասնագետներին, որոնք լեզվական նույն՝ ձև-վույթային մակարդակում հավասարության ընդհանուր նշան չեն դնում բո-

լոր տեսակի երկրորդական ձևույթների միջև: Այս դեպքում, բնական է, համանունությունը որոշելիս պիտի զուգադրվեն ընդհանրապես նույնպիսի դեր ունեցող երկրորդական ձևույթները:

Ինչպես տեսնում ենք, լեզվի ձևույթային մակարդակը իր միավորների բնույթով ու արժեքով միատարր չէ: Այստեղ միավորներն այնքանով են ընդհանուր, որ իրենց տեսակի մեջ ձևա-իմաստային նվազագույն եզրեր են: Այդ միավորները տարբերվում են իրենց արտահայտած իմաստների վերացարկվածության բնույթով: Այսպես, նախադասության բառաձևում ունենք երեք ձևային՝ նախադասական, որտեղ նախ ձևային համեմատությամբ արան ձևային իմաստն ավելի վերացական է, իսկ ից ձևայինը՝ առավել վերացական: Վերջինս զուտ քերականական իմաստ է (եման, անջատման, բացառման իմաստ) և այդ պատճառով էլ շատ վերացական է: Թեև ոչ նույնպիսի, բայց իր բնույթով նրան ավելի մոտ է կանգնած արան ածանցի իմաստը: Այդ իմաստները որոշակի ու հստակ են դառնում նրանց գործածության ոլորտում: Հենց այս հանգամանքն էլ ուսումնասիրողին թելադրում է այդպիսի ձևայինների արժեքը քննելիս դրանք վերցնել ոչ թե բառից կամ բառաձևից կտրված, այլ դրանց կազմում:

Քերականական համանունության հարցը շոշափելիս գրեթե ոչ մի զրգավարություն չի ներկայացնում ձևայինների արտահայտության (արտաքին հնչյունական կողմի) որոշումը (նկատի չունենք առանձին լեզվաբանականությունները): Ողջ զրգավարությունը կապվում է իմաստային կողմի հետ, որի հարաբերությամբ էլ որոշվում է հնչյունային (հնչյունային) նույնպիսի դրսևորում ունեցող մեկ այլ միավորի համանուն լինելը կամ չլինելը: Այդ զրգավարությունը խիստ ակնբախ է հատկապես երկրորդական ձևայինների համանունությունը վեր հանելու գործում, քանի որ, ինչպես վերը նշեցինք, դրանց արտահայտած իմաստների մեջ վերացարկումն ուժեղ է: Եվ պատահական չէ, որ բառակազմական մասնիկների իմաստները ցուցադրելու համար սովորաբար վերցնում ենք դրանցով կազմվող բառերը և նրանց հիման վրա մատնանշում ածանցական իմաստները, քերականական մասնիկների (վերջավորությունների և նմանների) իմաստների մասին խոսելիս վերցնում ենք դրանք պարունակող բառաձևերը: Այսպիսի մոտեցումը ուսումնասիրողին հրաշարավորություն է տալիս խոսափել հնարավոր լեզվաբանականություններից:

Քերականական իմաստի որոշման հարցում բառաձևի անկախ առումն էլ հաճախ բավարար չի լինում: Օրինակ՝ գրաբարյան խրատու բառաձևում մենք ունենք քերականական ու մասնիկը (երկրորդական ձևային): Արդյոք այս մեկ բառաձևով մենք կարող ենք մատնանշել այդ մասնիկի կարգային (կատեգորիալ) բոլոր իմաստները: Իհարկե՝ ոչ: Եթե մեկն ասի, թե այստեղ կա սեռականի հոլովական իմաստը, մի ուրիշը կարող է ասել՝ կա տրականինը, մի երրորդն էլ՝ գործիականինը: Եվ դրանով, իհարկե, հարցը չի լուծվել: Մինչդեռ վերցնելով այդ բառի բոլոր թեքված ձևերը ամբողջ հարացույցի մեջ՝ կտեսնենք, որ գործ ունենք ոչ թե միայն մեկ խրատու, այլ՝ երեք նույնպիսի (միայն արտաքինով նույնպիսի) բառաձևերի հետ, որոնցից յուրաքանչյուրը կարգային (տվյալ դեպքում՝ հոլովի կարգի) մի առանձին իմաստ է արտահայտում՝ խրատու-սեռականի, խրատու-տրականի, խրատու-գործիականի իմաստներ: Դա նշանակում է, որ, իրոք, այստեղ կա ոչ թե մեկ, այլ երեք ուրույն բառաձև-միավոր, որոնք արտահայտության կողմով՝ հնչումով, համ-

ընկնում են, իսկ բովանդակության կողմով տարիմաստ են: Այսպիսով մենք զործ ունենք քերականական եռանդամ համանունության հետ, որտեղ արտաքինով համընկնող երեք բառաձևեր ունեն քերականական տարբեր և ուրույն իմաստներ: Այդ իմաստները, իհարկե, առկա են ու ձևությամբ շնորհիվ: Իսկ ինչի՞ հիման վրա են ստեղծվում կարգային այդ իմաստները: Անշուշտ՝ կիրառությունների հիման վրա: Որպեսզի համոզվենք, որ համապատասխան հարացույցում խրատու բառաձևեր հանդես է գալիս երեք ուրույն միավորների իրավունքով (որպես սեռական, տրական և գործիական հոլովաձևեր), ըստ խոսքի մեջ ունեցած դրսևորումների պիտի ցույց տանք այդ ուրույն միավորների իրական գոյությունը՝ համապատասխան իմաստներով: Այսպես. «Հուայ գձայն խրատու հօր իմոյ», «Հո՛ւր, որդե՛ակ, խրատու հօր քոյ», «Իսկ արին Վարդան յառաջ մատուցեալ և զաւազանին հարցանէր, և միաբան ամենեցուն խրատու զգօրագլուխսն կարգէր»: Առաջին օրինակում նույն ձևի տակ առկա է սեռականի իմաստը («Հսեցի հորս խրատի ձայնը»), երկրորդում՝ տրականինը («Որդյա՛կ, ենթարկվի՛ր հորդ խրատին»), երրորդում՝ գործիականինը («Իսկ քաջ Վարդանը առաջ գալով, հարցուփորձ արեց ավազանուն և բոլորի միաբերան խրատով (խորհրդով) զորագլուխներ նշանակեց»): Բերված օրինակները հաստատ հիմք են տալիս բնղունելու, որ, իրոք, ընդգծված բառաձևերը համանուններ են՝ քերականական ուրույն իմաստներով:

Կամ վերցնենք ուրիշ օրինակներ ուսերենից: Այստեղ գոյականների հոլովման համակարգում ու ձևությամբ կարող են արտահայտվել հոլովական մի շարք իմաստներ՝ եզակի սեռական, տրական, նախդրային (предложив), հոգնակի ուղղական, հայցական: Ուրեմն այդպիսով հոլովման մեջ ուսերենն ունի հինգ ու որպես քերականական համանուն ձևությամբ: Բայց անկախ առումով դրանց ուրույն արժեքն ու իմաստները զգալի է լինում ցույց տալու: Այդ պատճառով վերցվում են համապատասխան բառաձևերը հոլովման համակարգի հարացույցում: Ըստ այդմ, օրինակ, НОЧІ հնչյունախմբով արտահայտվում են НОЧЬ բառի եզակի սեռական, տրական, նախդրային, հոգնակի ուղղական և հայցական հոլովները, որոնց ուրույն իմաստները վերը ցույց տրված ձևով կարելի է երևան հանել ըստ համապատասխան կիրառությունների:

Այս հանդամանքները հաշվի առնելով՝ այստեղ մենք հայերենի քերականական համանունության դեպքերը քննելիս նկատի կունենանք բառաձևերը: Բայց քանի որ բառաձևերի ուրույն իմաստները (քերականական նշանակությունները) բխում են կիրառություններից ու որոշակիորեն երևան են գալիս կապակցական հանդամանքներում, ուստի որոշ դեպքերում կդիմենք նաև նրանց կիրառություններին:

Ժամանակակից լեզվաբանության համար բառաձև-որոշակի հասկացություն է: Դա հարացուցային եզրային միավոր է՝ համապատասխան իմաստով: Այն ձևաբանական մակարդակի նվազագույն միավորն է և կոչված է ծառայելու որոշակի նպատակների՝ դրսևորելով քերականական իմաստներ: Ուստի՝ ձևի և իմաստի միասնություն է: Առանց իմաստի բառաձևը ուրույն միավոր չի կարող լինել և ոչ մի արժեք չի կարող ունենալ: Բառաձևի համար նշելով ձևի և իմաստի միասնությունը՝ երբեք չի կարելի անտեսել նրա և քերականական (այլև՝ ուրիշ) երկրորդական ձևությունների տար-

բերությունը: Քերականական երկրորդական ձևայինները, լինելով քերականական իմաստներ արտահայտող մասնիկներ, դրսևորվում են բառաձևերի կազմում: Ուրեմն՝ սակայն առումով պետք է տարբերել այդպիսի ձևայինների համանունությունը բառաձևերի համանունությունից՝ միաժամանակ նրկատի ունենալով, որ այդ մասնիկների կիրառությունն իրացվում է բառաձևերում:

Հարացույցը այս կամ այն խոսքի մասի՝ քերականական իմաստներով պայմանավորված ձևային դրսևորումների համակարգային ամբողջությունն է: Որպես այդպիսին այն օբյեկտիվորեն գոյություն ունի լեզվի կառուցվածքի մեջ: Գիտական կամ ուսուցողական նպատակներով երբ կազմվում է, ասենք, գոյականի հոլովման կամ բայի խոնարհման հարացույց-աղյուսակը, կատարվում է յուրատեսակ վերացարկում: Այնտեղ ներկայացվող աղյուսակային նմուշների ետևում «թարնված են լինում» քերականական որոշակի իմաստներ: Հասկանալի է, որ բառաձևերն էլ՝ որպես համակարգային աղյուսակների անդամներ՝ պայմանավորված են որոշակի իմաստներով: Հարացույցային շարքում յուրաքանչյուր միավոր մյուս միավորներից տարբերվում է ձևա-իմաստային հատկանիշներով: Հենց այստեղ էլ կարող են լինել ձևային համընկումներ և իմաստային տարբերություններ: Այդպիսի դեպքերը սերտորեն կապվում են քերականական համանունության երևույթի հետ: Կարևոր ենք համարում ընդգծել, որ իմաստային այդ տարբերությունները պետք է լինեն կարգային (կատեգորիալ), այլապես մենք ընդհանուր ձևի տակ կունենանք բազմիմաստություն և ոչ թե համանունություն:

Ուրեմն՝ հարացույցային միավորների (բառաձևերի) համանունությունը լինում է իմաստի կարգային տարբերությունների և ձևային համընկումների դեպքում: Սակայն կարող է լինել և հակառակը՝ իմաստային ընդհանրություն և ձևային տարբերություն: Նման դեպքերում արդեն հանդես կգա քերականական համանիշության երևույթ: Օրինակ՝ ծառի ճյուղ, մատանու ակ, աշնան տերև, փռչ ուղի և նման այլ կապակցություններում զույգ բառերից առաջինները հոլովական նույն իմաստն ունեն: Դա սեռականի իմաստն է, որը, սակայն, ձևային տարբեր դրսևորումներ ունի՝ ծառի, մատանու, աշնան, փռչ: Այդ տարբեր ձևերը հարացույցում կգրավեն միևնույն անդամի (սեռական հոլովի) տեղը:

Սա մեր քննության առարկան չէ, և այստեղ այս երևույթի ուսումնասիրությամբ չենք զբաղվելու: Սակայն սրանից իր հերթին բխում է մի այնպիսի ուղադրվ հետևություն, որն առանձնապես կարևոր է մեր խնդրի համար: Դա այն է, որ հարացույցային անդամ հասկացությունը ավելի լայն ընդգրկում ունի, քան հարացույցային միավոր-բառաձևը: Այն սոսկ մեկ անհատ բառի փոփոխություն չէ, այլ՝ քերականական կարգային միևնույն իմաստն արտահայտելու համար նույն խոսքի մասին պատկանող բոլոր բառերի փոփոխությունը: Ուրեմն՝ հարացույցային այս կամ այն անդամի տեղը կարող են գրավել այն բոլոր անհատ բառաձևերն անխտիր, որոնք իրենց մեջ պարունակում են հարացույցային տվյալ անդամի իմաստը: Օրինակ՝ հոլովական հարացույցի անդամներ են հոլովները, խոնարհման համակարգում՝ դեմքերը՝ ըստ եղանակա-ժամանակային ձևերի և այլն:

Եթե որոշակիորեն հայտնի են տվյալ լեզվի քննարկվող հարացույցի առանձին անդամների իմաստները, ապա համանունությունը որոշելիս դրանք

նկատի են առնվում որպես իմաստային առանձին միավորներ՝ հակադրվելով այլ անդամների իմաստներին՝ նրանց ձևային ընդհանրության պայմաններում: Հնարավոր է, որ հարացուցային մեկ անդամի ընդհանուր ու իր սահմաններում ամբողջական իմաստի մեջ լինեն այլևայլ երանդներ, իմաստային տարբեր առումներ: Համանունության իմաստային կոդմի քննելիս, անշուշտ, ճիշտ չի լինի միմյանց հակադրել այդ ընդհանուր իմաստի տարբեր առումները: Տարբերությունը պետք է դիտել հարացուցային տարբեր անդամների բնորոշ իմաստների միջև: Այսպես, մինչև այժմ կատարված քննությունները պարզել են, որ սեռական հոլովը՝ որպես հոլովական հարացույցի մեկ անդամ՝ ունի իմաստային մի քանի տառնյակ առում, որոնք բոլորն էլ ի վերջո մտնում են պատկանելության ընդհանուր նշանակության շրջանակի մեջ: Համանունության իմաստի համար միմյանց նկատմամբ տարբեր չպետք է համարենք այդ տարբեր առումները: Ասենք թե ըստ կիրառության այդ հոլովով դրված մեկ բառաձևի մեջ ունենք ստացական սեռականի իմաստ (իմաստային առում), մի ուրիշի մեջ՝ նյութի սեռականի, մի երրորդի մեջ՝ պարունակության սեռականի և այլն: Այս դեպքում դրանք չի կարելի հակադրել իրար, որովհետև բոլոր դեպքերում էլ առկա է սեռականի իմաստը: Բայց, ընդհակառակն, բառաձևեր հոլովական այդպիսի նշանակությամբ կարող ենք հակադրել, ասենք, տրականի իմաստին, որ է հանդուժանությունը իր բաղմամբիվ առումներով: Իմաստային այսպիսի հակադրության և տարբերության պայմաններում եթե կա գրեթե ամեն ձևերի համընկում, ապա իրավունք կունենանք արձանագրելու համանունությունը: Այսպիսով հնարավոր կլինի տարբերել համանունությունը բաղմամբության երևույթից, որը մեր խնդրի համար առանձնակի կարևորություն ունի: Եվ ընդհանրապես վերը շարադրվածը էական հիմք պիտի ծառայի մեր խնդրի իրազորման հարցում:

Այժմ անցնենք հայերենի քերականական համանունության փաստերի դիտարկմանը:

Հնարավոր հստակության համար նախ տարբերենք ներհարացուցային և միջհարացուցային համանունությունները: Ներհարացուցային համանունությունը ասելով մենք հասկանում ենք քերականական այնպիսի համանունությունը, որն առկա է տվյալ հարացույցի սահմաններում, այսինքն՝ երբ նույն հարացույցի մեկից ավելի միավորները, ունենալով կարգային տարբեր իմաստներ, համընկնում են ձևով: Այդպիսով կունենանք համանունություն հոլովման համակարգում՝ առանձին և խոնարհման համակարգում՝ առանձին: Միջհարացուցային համանունությունը ասելով հասկանում ենք տարբեր համակարգեր ներկայացնող հարացույցների միջև եղող համանունությունը, այսինքն՝ երբ դրանցից մեկի որևէ միավոր ձևով համընկնում է մյուսի որևէ միավորին: Այլ կերպ ասած՝ երբ հոլովածը արտաքուստ համընկնում է խոնարհման ձևին: Ըստ այդմ՝ նախ առանձին-առանձին կքննենք ներհարացուցային համանունները, ապա կանցնենք միջհարացուցայիններին:

Մեր պատկերացմամբ հոլովման համակարգում յուրաքանչյուր հոլով մի ուրույն համակարգ է, մեծ համակարգի մեջ՝ մի մանրահամակարգ: Այդ մանրահամակարգերը համապատասխան դասավորությամբ կազմում են հոլովական համակարգի հարացույցը, որտեղ հարացուցային մեկ անդամը մեկ հոլով է: Իսկ քանի որ, ինչպես նշեցինք, հարացուցային այդ անդամը մի

մանրահամակարգ է որոշակի իմաստով ու ձևային դրսևորումներով, ուստի այն ամբողջովին վերցված (հոլովվող բառերի բոլոր հնարավոր ձևափոխություններով) չի կարող լիակատար համանունություն ունենալ ուրիշ հոլովների հետ: Համանուն կարող են լինել այս կամ այն հոլովին պատկանող առանձին բառաձևերը կամ նրանց խմբերը մի այլ հոլովի նույնպիսի բառաձևերի հանդեպ:

Մեր հին գրական լեզվի՝ գրաբարի հոլովական համակարգն ուներ կարգային վեց անդամ՝ վեց հոլով, որոնցից և ոչ մեկը ձևային բոլոր դրսևորումների ամբողջական առումով լիակատար չափով չէր համընկնում ուրիշ հոլովի: Այլապես հազիվ թե ընդունվեին այդ քանակի հոլովներ: Ձևային համընկումներ (իմաստային տարբերություններով) կան բառաձևերի խմբերում: Ամենից շատ զուգահեռումներ ունեն սեռական և տրական հոլովները: Այստեղ էլ զուգահեռումների հարաբերությունը նույնական չէ եզակի ու հոգնակի թվերում: Այսպես, անվանական հոլովման բոլոր տիպերում բաց բառաձևերի՝ հոգնակի թվում սեռական ու տրական հոլովները ձևով նույնական են (այդ չափով համանուն են): Ինչպես՝ տիտանաց, ձկանց, դստերց (աց), փայտից, գետոց, ծովուց, աուրց, ֆաղաֆաց, մասանց, պատանեաց, առանց, կանանց (կանաց), տիկնաց (տիկնայց), տեառնց (տեառց), գիղից, ֆերց, հնոց, նորոց, ահեկաց և այլ ձևերը սեռականի իմաստն արտահայտելիս սեռական հոլովաձևեր են, տրականին՝ արտահայտելիս՝ տրական: Այս սահմաններում, ուրեմն, նրանք համանուն են: Սակայն եզակի թվում կա որոշ սահմանափակում: Տիտանայ, ձկան, դստեր, փայտի, գետոյ, ծովու, աուր, ֆաղափի, մասին, պատանոյ, առն, կնոջ, տիկնոջ, տեառն, գեղջ, ֆեռ եզակի ձևերը համապատասխան իմաստներով մի դեպքում սեռական են, մի այլ դեպքում՝ տրական: Բայց նույնը չի կարելի ասել հին, նոր, ահեակ բառերի եզակի թվի համապատասխան թեք ձևերի մասին: Այստեղ սեռականն ու տրականը արտահայտության կողմում կարող են տարբերվել. մի կողմից՝ հնոյ, նորոյ, ահեկի, մյուս կողմից՝ հնում, նորում, ահեկում: Չենք խոսում դերանվանական հոլովման մասին, որտեղ եզակի թվում սեռականի և տրականի ձևային տարբերությունն ավելի հաճախ է հանդիպում, իսկ հոգնակի թվում տարբերություն կա անձնական դերանուններում (մեր-մեզ, ձեր-ձեզ):

Անվանական հոլովման մեջ հոգնակի սեռականի ու տրականի մասնիկավորումն ունի նաև բացառականը, սակայն նրանցից տարբերվում է ի նախդիրով, որը մշտական բաղադրիչ էր դարձել այդ հոլովի համար (ի տիտանաց, ի ձկանց և այլն): Սա բառաձևերի համար թերևս կարելի է անվանել միակողմանի համանունություն կամ կիսահամանունություն, քանի որ հոլովիչ ու հոլովակերտ մասնիկները համանուն են, իսկ ամբողջ բառաձևը՝ ոչ: Եզակի թվում էլ այսպիսի կիսահամանունություն կա բացառական ու սեռական, տրական հոլովների միջև՝ այն բառաձևերում, որոնք չեն ստանում է հոլովակերտը (հմմտ. սեռական, տրական՝ տիտանայ, գետոյ, պատանույ, բացառական՝ ի տիտանայ, ի գետոյ, ի պատանոյ):

Համանունություն կա եզակի թվում ուղղականի և հայցականի միջև, երբ վերջինս գործածվում է առանց նախդիրի: Այսպես, ձուկն, դուստր, փայտ, գետ, ծով, աւր (օր), ֆաղաֆ, մասն, պատանի բառերը այսպիսի ուղիղ կամ ելակետային ձևերով, հոլովման հարացույցում հանդես են գալիս որպես ուղղական: Հոլովի իմաստն ընդունելով և դառնալով հարացույցի բաղկացու-

դիչներ՝ նրանք այդպիսով ստանում են բառուձևի արժեք՝ զրո վերջավորությամբ: Այդ բառաձևերը նույնությամբ, բայց քերականական իմաստի տարբերությամբ կարող են տեղ գրավել հայցական հոլովի շարքում՝ աննախդիր գործածությամբ ու անորոշ առումով: Այդ իրավունքը նրանք ձևոք են բերում հայցական հոլովի իմաստի արտահայտումով: Այլապես կմնային միայն ուղղականի շրջանակներում: Այդ ցույց տալու համար վերցնենք այսպիսի օրինակ: Եթե ասենք, որ ծով բառը զրո վերջավորությամբ միայն մեկ հոլովի ձև է, սխալված կլինենք, որովհետև այդ ձևը կարող է հանդես գալ հոլովական երկու տարբեր իմաստներով: Ինչպես՝ «Բարի և զեղեցիկ է ծովի խաղաղ ժամանակի», «Իմ ոչ է տեսնալ ծով»: Բերված նախադասություններում ծով բառն ունի ձևաքին նույնություն, սակայն հոլովական երկու տարբեր իմաստ: Առաջինում առկա է ուղղականի իմաստը («խաղաղ ժամանակ ծովը բարի ու զեղեցիկ է»), երկրորդում՝ հայցականին («Ես ծով չեմ տեսնալ»): Միանգամայն ակնբախ է քերականական համանունությունը: Նույնը կարելի է ցույց տալ և այլ օրինակներով: Չշարունակենք, բայց ընդգծենք, որ դա բացարձակ չէ բոլոր հնարավոր դրսևորումներում: Լեզուն հոլովական իմաստների տարբերության հիման վրա ձգտել է ցուցաբերել և ձևային տարբերություն: Հայտնի է, որ հայցականին շատ հաճախ ուղեկցում է զ նախդիրը (չենք խոսում այլ նախդիրների մասին), որը մեծ մասամբ որոշյալ առման քերականական նշանակություն է տալիս և միաժամանակ ըստ ձևի տարբերակում է ուղղականն ու հայցականը այդ սահմաններում: Նույնիսկ նկատելի է, որ առանձին բառերում այն դարձել էր եզակի թվի ուղղականի և հայցականի տարբերակիչ՝ անկախ որոշյալությունից: Հիշենք, օրինակ, անորոշ դերանունները, որոնք ինքնրստինքյան անորոշ իմաստ ունենալով՝ հայցականում գ նախդիր են բնորոշում (զոմն, զոք և այլն):

Չենք խոսում հոգնակի հայցականի մասին, որն ունի իր որոշակի ցուցիչը (ս) և ոչ մի հոլովի հետ քերականական համանունություն չի առաջացնում (հատկապես նկատի ունենք անվանական հոլովումը):

Ինչպես վերն էլ տեսանք, համանուններ են ու հոլովման (արտաքին) բառաձևերը եզակի սեռական, տրական և գործիական հոլովաձևերում, քանի որ այստեղ հանդես է գալիս միայն ու հոլովիչը, դրան չեն զուգակցվում հոլովակերտ մասնիկներ (ծովու, կովու, աբեու, վնասու, ֆինու և այլն, որոնցից յուրաքանչյուրը երեք տարբեր հոլովների արտահայտիչ է եզակի թվում): Նկատենք, որ դրաբարի եզակի գործիականը միայն այս դեպքում համանունություն ունի սեռական և տրական հոլովների հետ: Այլ դեպքերում այս հոլովը հոլովիչին զուգահեռ բնորոշում է հոլովակերտներ (ւ, վ, բ) և կամ միաժամանակ փոխում է հոլովիչը ու այդպիսով տարբերվում սեռականից և տրականից (փայտի, գետով, դստեր, ֆաղափա, պատանեալ և այլն): Այս հոլովման բառաձևերը հոգնակի թվում անվանական հոլովման մեջ մյուս բոլոր բառերի նման համանունություն ունեն սեռականում, տրականում, և, վերը նշված վերապահությամբ՝ բացառականում:

Եվ ընդհանրապես երբ հոլովման համակարգում զուգադրում ենք եզակի ու հոգնակի ձևերը, հեշտությամբ նկատում ենք, որ հոգնակի ձևերը և ոչ մի հոլովում համանունություն չունեն եզակի ձևերի հետ (չենք հաշվում խիստ մասնակի դեպքերը որոշ դերանուններում, այն էլ միայն վերջավորություններում, ինչպես՝ ի նման, և ի նոցան, և այլն): Պատճառը տարբեր

ցուցիչների գոյությունն է: Բայց ինչո՞ւ, օրինակ, հարացույցում մեկ հոլովի հոգնակի ձևերը չենք դնում մեկ այլ հոլովի եզակիի ձևերի կողքին: Այլ կերպ ասած՝ ինչո՞ւ ս-ով (հայցականի) ձևերը չենք դնում, ասենք, եզակի սեռականի կամ բացառականի ձևերի կողքին և այլն: Այստեղ էլ պատճառը հոլովական ընդհանուր իմաստն է: Հոլովական նույն իմաստն ունեցող հոգնակիի ձևերը բնականաբար տեղ են գրավում միևնույն իմաստն արտահայտող եզակիի ձևերի կողքին՝ կազմելով հոլովական մեկ ամբողջություն:

Անցնելով ժամանակակից արևելահայ գրական լեզվի հոլովական համակարգի համապատասխան իրողություններին՝ ամենից առաջ պիտի նշենք հետևյալը: Այստեղ էլ յոթանդամանի հոլովական հարացույցում և ոչ մի հոլով ամբողջական առումով (բոլոր դրսևորումներով) քերականական համանունություն չունի ուրիշ հոլովի հետ, որովհետև նրանցից յուրաքանչյուրը տարբեր իմաստով հանդերձ՝ մյուսներից այս կամ այն չափով տարբերվում է և ձևով: Այս դեպքում էլ մենք հոլովը վերցնում ենք ոչ որպես սոսկ մեկ բառի ձև՝ համապատասխան իմաստով, այլ՝ որպես ուրույն մանրահամակարգ՝ ժամանակակից գրական լեզվի բոլոր հոլովվող բառերի՝ քերականական կարգային տվյալ իմաստով հանդես եկող բառաձևերի ամբողջություն: Այստեղ նույնպես հոլովների համանունությունը հնարավոր է սահմանափակումներով, ոչ լիակատար չափով:

Համանուն են սեռականն ու անորոշ տրականը թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվում: Մառի, մատանու, քոռան, տան, փախստյան, կնոջ, եղբոր, օրվա, սիրո, աղջկա, դստեր և նման այլ բառաձևերը սեռական հոլովի իմաստով եզակի սեռական են, իսկ տրականի իմաստով՝ հավասարապես անորոշ տրական: Այսպես էլ՝ ծառերի, մատանիների, քոռների, տների, փախուստների (հազվադեպ), եղբայրների, օրերի, սերերի (հազվադեպ), աղջիկների, դուստրերի, կանանց բառաձևերը համանունությամբ հոգնակի սեռականի և տրականի ձևեր են: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այստեղ համանունությունը առաջ է եկել համապատասխան հոլովական ցուցիչների համանունությամբ: Ըստ այդմ՝ ի-ն, ու-ն, ան-ը, ա-ն և այլն թե՛ սեռականի և թե՛ տրականի հոլովական իմաստների արտահայտիչներն են և դրանով իսկ համանուն են՝ յուրաքանչյուրն իր երկփեղկումով: Սեռականին ու անորոշ տրականին ձևով համընկնում են նաև անձի իմաստ ունեցող այն բառաձևերը, որոնք հանդես են գալիս հայցականում՝ անորոշ առումով և նույն ձևով: Նույն դեպքերում արդեն կունենանք ոչ թե երկու, այլ երեք ձևերի համանունություն: Ինչպես՝ «Ջինվորի քաջությունը բարձր գնահատվեց» (սեռական), «Ես հանդիպեցի մի զինվորի» (տրական), «Ես տեսա մի զինվորի» (հայցական):

Որոշյալ առման դեպքում սեռական ու տրական հոլովները նույնաձեվություն չունեն, քանի որ տրականը որոշիչ հոգ է ընդունում, իսկ սեռականը՝ ոչ (նկատի չունենք փոխանուն սեռականի դեպքերը, որոնք իրենց մեջ հոգ պարունակում են, բայց, այդուհանդերձ, դարձյալ տարբերվում են տրականից, ինչպես՝ Վարդանինի և Վարդանինին): Հոգը գումարվում է հոլովաձևին և դառնում յուրահատուկ տարբերակիչ սեռականի ու տրականի ձևերի համար: Հմմտ. մի կողմում՝ ծառի-ծառերի, մատանու-մատանիների, քոռան-քոռների և այլն, մյուս կողմում՝ ծառին-ծառերին, մատանուն-մատանիներին, քոռանը-քոռներին և այլն: Հենց սա էլ ձևային տարբերություն է

առաջացնում և սահմանափակում տրականի ու սեռականի համանունությունը: Հիշենք, որ սրանք սոսկ ձևեր չեն, այլ պարունակում են հոլովական ուրույն իմաստներ: Խոսքի մեջ հանդես եկող բաղմահազար գործածություններից դիտենք, որ պատկանելության, ստացականության և համանման իմաստներ արտահայտելիս բառաձևին երբեք չի ուղեկցում որոշիչ հոգը, իսկ, ասենք, մատուցման, հանգման և նման այլ իմաստներ արտահայտողներին կարող է զուգակցվել Արևելահայ դրականի համար ընդունված չէ տակ կամ գրել բանվորին բնակարան(ը), ծառին տերև(ը) և այլն, այլ միայն բանվորի բնակարան(ը), ծառի տերև(ը) և այլն (նկատի ունենք բառակապակցությունների առաջին անդամները), սակայն միանգամայն հնարավոր են մոտենալ ծառին, բնակարան տալ բանվորին և այլն: Պատճառը որոշակի է. առաջին օրինակներում առկա է սեռականի, իսկ վերջիններում՝ տրականի կարգային իմաստը:

Ժիշտ է, հոգը որոշյալ առման իմաստ է բերում, բայց դա միանում է հոլովական իմաստին: Այն իրողությունը, ըստ որի հոգը մեկ հոլովում բացառվում է, իսկ մյուսում լինում է, որոշակիորեն խոսում է նույնաձևությունից խուսափելու մասին: Մեր լեզվի պատմական զարգացմանը վերաբերող որոշ իրողություններ էլ այդ են հաստատում: Այսպես, արևելահայ աշխարհաբարի մեջ տեղի են ունեցել որոշ այնպիսի փոփոխություններ, որոնք ավելի ու ավելի են ընդգծել սեռականի ու տրականի այդ տարբերությունը: Հիշենք, որ մեր բարբառների մի մասում (օրինակ՝ Արարատյանում) որոշիչ հոգ են ստանում բոլոր հոլովները (բացի սեռականից, որոշ բարբառներում՝ սեռականն էլ): Արևելահայ աշխարհաբարի ձևավորման վաղ շրջանում և նույնիսկ անցյալ դարում մոտավորապես նույնպիսի վիճակ գոյություն ուներ: Սակայն զնալով որոշ հոլովներ այստեղ զրկվեցին հոգից (ներգոյականը, գործիականը և բացառականը): Որոշյալ տրական հաստատուն կերպով պահպանեց հոգը՝ ի տարբերություն սեռականի: Բացի դրանից, որոշ տիպի հոլովումների մեջ սեռականում հոլովական վերջավորությունը զրկվեց ն հնչյունից (չենք ասում, թե դա հոգ էր): Օրինակ՝ վա հոլովական վերջավորությունը սկզբնապես ուներ վան ձևը (օրվան, ամսվան, տարվան, առավոտվան և այլն): Հետագայում ն-ն աստիճանաբար սկսեց անջատվել ու տատանվել և վերջնականապես ընկավ (մնաց միայն մահվան ձևում): Եվ այժմ օրվա, ամսվա... սեռական ձևերի հանդեպ օրվան, ամսվան... ձևերը գիտակցվում են որպես որոշյալ տրականի ձևեր: Իհարկե, անորոշ տրականում ևս այժմ ն-ն չի արտահայտվում, քանի որ այս հոլովում նույնպես այն գիտակցվում է որպես որոշիչ հոգ՝ մյուս հոլովումների բառաձևերի զուգահեռության պայմաններում: Տրականում հոգի վերափոխատավորում է ստացել իր վերջավորության երբեմնի ն-ն: Նույնպիսի դրություն կա և աղջիկ բառի հոլովման մեջ: Հին հայերենի սեռականի աղջկան ձևի փոխարեն այժմ ունենք աղջկա ձևը, որի հանդեպ աղջկան ձևը գիտակցվում է որպես որոշյալ տրական (անորոշը՝ դարձյալ աղջկա): Հետաքրքրական է նաև այն, որ այդ բառերի հիշյալ հոլովների երբեմնի ն-ն դեռ որոշ չափով պահպանվում է այդ հոլովների հիմքով կազմվող այլ հոլովներում: Ինչպես՝ օրվանից, տարվանից, աղջկանից, աղջկանով և այլն: Եթե նա որոշիչ հոգը լիներ, այստեղ չէր պահպանվի, ինչպես մյուս հոլովների ձևերում:

Այնուհետև՝ դեռ ոչ վաղ անցյալում արևելահայ դրական լեզվի ինքը

ղերանվան սեռական և տրական (այլև՝ հայցական) հոլովածները հաճախ գործածվում էին համանունությամբ՝ իրեն ձևով: Հատկապես բանավար խոսքում (երբեմն էլ գրավորում) կարելի էր հանդիպել իրեն գիրք, իրեն ընկերը և նման այլ շատ գործածությունների, որոնք արդեն խիստ հնացած են: Այժմ մեր գրական լեզուն հստակորեն տարբերում է իր և իրեն ձևերը՝ առաջինը որպես սեռական, երկրորդը՝ տրական: Այստեղից էլ՝ ոչ թե իրեն գիրք, իրեն ընկերը, այլ իր գիրք, իր ընկերը, բայց՝ գիրք հանձնեցի իրեն և այլն: Սա էլ սեռականի ու տրականի ձևային տարբերացման կարևոր փաստ է: Չենք խոսում անձնական մյուս ղերանունների, մի քանի ցուցականների սեռական և տրական ակնառու տարբեր ձևերի մասին, որոնք ժամանակակից գրական լեզվում առկա են դեռ նրա կազմավորման շրջանից (խիստ մասնակի փոփոխություններով):

Մեր լեզվի այս բոլոր իրակությունները միասին վերցված զգալի չափով սահմանափակում են սեռական և տրական հոլովների համանունությունը, որովհետև տարբերություններ են առաջ բերում նրանց արտահայտության կողմում:

Հայցական հոլովն էլ՝ որպես մի ամբողջություն, մի ուրույն մանրահամակարգ՝ նույնպես լիակատար համանունություն չունի այլ հոլովի հետ: Այստեղ ուրիշ հոլովների հանդեպ համանունություն կարող է լինել բոլոր գրականների երկու խմբերի: Իսկ այդ խմբերը որոշվում են անձ և իր նշանակելով: Անձի և իրի կարգերը գոյականների տեսակային կարգեր են և ընդհանրապես մնում են նրանց իմաստային սահմաններում: Նրանց տարբերությունները քերականորեն զրոսերվում են հայցական հոլովում: Այդ զրոսերումնեից էլ կախված է այս հոլովի համանունությունն այլ հոլովների հետ: Անձի անվան հոլովման դեպքում հայցականը թե՛ անորոշ, թե՛ որոշյալ առումով համանուն է տրականին (հմմտ. տեսա բանվորի(ն) և մոտեցա բանվորի(ն), անորոշ առման դեպքում՝ նաև սեռականին (հմմտ. սիրել բանվորի և բանվորի աշխատավարձ): Խոսքի մեջ չեն բացառվում նաև ուղղականաձև որոշ գործածություններ (օրինակ՝ բանվոր վարձել և այլն): Իրի անվան հոլովման դեպքում համանունությունն ուղղականի հետ է (հմմտ. տեսա շենք(ը) և շենք(ը) կառուցվեց): Ուրեմն՝ հայցականի համառ քերականական համանունությունը սահմանափակվում է բոլոր անձի և իրի կարգերի (չենք շոշափում անձի և իրի առումների հարցը և հարակից այլ հարցեր): Երբ այդ տարբերությունները տեղ են գրավում հարացույցում՝ միաժամանակ, հայցականն իր ամբողջության մեջ արտահայտության կողմով նույնաձև չի լինում և ոչ մի հոլովի հետ: Ըստ մեր օրինականների՝ ասենք տեսնել շենք(ը) և բանվորի(ն) կապակցությունը չի կարելի արտահայտել մեր լեզվի և ոչ մի ուրիշ հոլովով, քանի որ դա միմիայն հայցականի յուրահատկությունն է, որով և որոշվում է նրա ձևային ինքնուրույնությունը:

Ժամանակակից արևելահայ գրական լեզվի բացառական, գործիական և ներգոյական հոլովները համանունություն չունեն ոչ միմյանց, ոչ էլ մյուս հոլովների հետ:

Արդ՝ քննարկվող երևույթը դիտենք բայական համակարգում: Պետք է նշել, որ գրաբարի բայական համակարգն աչքի էր ընկնում քերականական համանունության առատ զրոսերումներով: Դա ամենից առաջ հանդես էր գալիս տարբեր սեռերի նույնաձև արտահայտությունների հիման վրա: Անո-

որոշ գերբայի ևլ. ալ. ուլ. անցյալ գերբայի ևալ. ապառնի գերբայի ոց (որոշ վերապահությամբ նաև՝ ի) մասնիկներով արտահայտվում էին սկզբնաձևավային սեռերի բոլոր իմաստները (եթե նկատի չունենանք ուշ շրջանում առաջացած որոշ երևույթներ): Ըստ այդմ՝ առաջնի կարող էր նշանակել «ուղարկել» (ներգործ.), «ուղարկվել» (կրավ.), վազել՝ «վազել» (չեղոք), աղալ՝ «աղալ» (ներգործ.), «աղացվել» (կրավ.), զնալ՝ «զնալ» (չեղոք), զնուլ՝ «մորթել» (ներգործ.), «մորթվել» (կրավ.), այսինուլ՝ «ուռել» (չեղոք), առաջնալ՝ «ուղարկել, ուղարկած» (ներգործ.), «ուղարկվել, ուղարկված» (կրավ.), հասնալ՝ «հասել, հասած» (չեղոք), զնացնալ՝ «զնացել, զնացած» (չեղոք), զնենալ՝ «մորթել, մորթած» (ներգործ.), «մորթվել, մորթված» (կրավ.), առաջնիոց՝ «ուղարկելու» (ներգործ.), «ուղարկվելու» (կրավ.), հասնիոց՝ «հասնելու» (չեղոք), զնիոց՝ «մորթելու» (ներգործ.), «մորթվելու» (կրավ.) և այլն: Ուրեմն՝ ներգործական բայերը նույնաձև մասնիկներով կարող են հանդես գալ նաև կրավորական սեռի իմաստով, իսկ չեղոքները միայն սեռային այդ իմաստով են: Սակայն նույնը չի կարելի ասել բոլոր դիմավոր ձևերի մասին: Այստեղ առկա են ուրիշ երևույթներ, որոնք համանունությունը հանդես են բերում յուրովի: Ներգործաձև և կրավորաձև վերջավորությունները ներգործական բայերի համար սեռային երկու տարբեր իմաստների դրսևորումներով են հանդես գալիս: Ուստի նրանց տարբեր արտահայտությունների զեպքում համանունություն չի կարող լինել, քանի որ ձևերն ընդհանուր չեն: Օրինակ՝ առաջնի ներգործաձև է և նշանակում է «ուղարկում եմ» (ներգործ.), առաջին կրավորաձև է, նշանակում է «ուղարկվում եմ» (կրավ.), այսպես էլ՝ առաջնից՝ «ուղարկեցի» (ներգործ.), առաջնից՝ «ուղարկվեցի» (կրավ.) և այլն⁹: Այսպիսով, սակայն, հարցը չի ըսպառվում: Բանն այն է, որ այսպիսի բայերն էլ հարացուցային որոշ մասերում սեռային այդ իմաստներն արտահայտում են նույնաձևությամբ, և այդ սահմաններում նրանց համապատասխան բառաձևերը (դիմավոր ձևերը) հանդես են գալիս համանունությամբ: Այսպես. բոլոր լծորդությունների բայերի համար սահմանական անցյալ անկատարի, հորդորական հրամայականի վերջավորությունները ըստ սեռերի ընդհանուր են: Այնպես որ ներգործական սեռի բայերն այստեղ նույն վերջավորություններով կարող են կրկնվել (համանուն լինել) կրավորական սեռի նշանակությամբ: Ինչպես՝ առաջինի ձևը կարող է նշանակել «ուղարկում էի» և «ուղարկվում էի», աղայր՝ «աղում էր» և «աղացվում էր», հնույր՝ «թափում էր» և «թափվում էր» և այլն: Այսպես էլ առաջնից՝ տեսչի՝ տեսչի՝, գիտասչի՝ և նման ընդհանուր ձևավորը՝ համապատասխան եղանակային ձևի ներգործական և կրավորական իմաստներով նույնպես համանունություն են ունենում և այլն: Ա լծորդության բայերի դիմավոր ձևերը վերջավորությունների ընդհանրության պատճառով նման համանունություն են ունենում ինչպես այստեղ, նույնպես և սահմանական ներկայում և արգելական հրամայականում, իսկ ու լծորդության բայերը՝ նաև առաջին ապառնիում: Հայտնի է, որ չեղոք սեռի բայերի մի մասն ընդունում է ներգործաձև, մյուս մասը՝ կրավորաձև վերջավորություններ: Այդպիսով այդ սեռի բայերի մի խումբը վերջավորությունների համանունություն կունենա ներգործական բայերի ներդործաձև, իսկ մյուս

⁹ Այս, ինչպես և ուրիշ լծորդությունների համակարգային բոլոր օրինակները այստեղ չենք կարող բերել: Դրանք կարելի է գտնել գրարարի քերականության գրքերում:

խմբերը՝ կրավորաձև վերջավորությունների հետ (հմմտ. մի կողմում՝ վաղնմ, հասաննմ||առարնմ, լուցաննմ, մյուս կողմում՝ բազմիմ, մեռանիմ||առաքիմ, լուցանիմ): Հասարակ բայերն էլ, քանի որ սեռային երկու (ներգործական և կրավորական) իմաստների արտահայտումով միշտ կրավորաձև են, ներգործական իմաստի կողմով նրանց վերջավորությունները համանուն են լինում կրավորական սեռի ձևերին (հմմտ. խօսիմ, խօսեցալ ձևերի «խոսում եմ», «խոսեցի» և ապա առաքիմ, առաքեցալ ձևերի «ուղարկվում եմ», «ուղարկվեցի» իմաստների արտահայտումը իմ և ալ համընկնող վերջավորություններով և ալլն): Մյուս կողմից համանունություն կունենան կրավորաձև շեղոքների հետ (բազմիմ, բազմեցալ և ալլն):

Գրաբարն ունի ժամանակային այնպիսի ձևեր, որոնք ընդհանրապես օժտվում են ներգործաձև և կրավորաձև համակարգային վերջավորություններով: Սակայն առանձին դեպքերում հանդես են գալիս ընդհանուր վերջավորություններով, որոնք ներգործաձև և կրավորաձև խոնարհումների ժամանակ նույնությամբ կրկնվում են և ըստ սեռային տարբեր իմաստների առաջ բերում համանունություն: Դրությունն այդպես է անցյալ կատարյալում և երկրորդ ապառնիում: Այսպես. անցյալ կատարյալի ներգործաձև ի, եր, ալ, էֆ(իֆ), ին և կրավորաձև ալ, աբ, ալ, ալ, ալ, ալ վերջավորությունների մեջ, ինչպես պարզ նկատելի է, ընդհանուր է հոգնակի թվի առաջին դեմքի ալ վերջավորությունը, որը նույն ձևով կարող է հանդես գալ և՛ ներգործական, և՛ կրավորական իմաստ արտահայտելիս (հմմտ. առաքեցալ՝ «ուղարկեցինք» և նույն ձևով՝ «ուղարկվեցինք»): Այդ պատճառով էլ ներգործական սեռի բայերը, կրավորաձև խոնարհվելիս ստանալով կրավորական սեռի իմաստ, հոգնակի թվի առաջին դեմքում ունենում են բառաձևի համանունություն՝ ներգործական իմաստն արտահայտող բառաձևի համեմատությամբ: Դա վերաբերում է միաժամանակ և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև խոնարհվող բոլոր լծորդությունների ներգործական կանոնավոր բայերին: Վերը փակագծում բերեցինք և խոնարհման բայի օրինակ: Նշենք նաև օրինակներ մյուսներից. ամացալ—«թափեցինք, լցրինք»||«թափվեցինք, լցրինք» (ալծ.), ընկեցալ «նետեցինք», նույն ձևով՝ «նետվեցինք» (ուլծ.) և ալլն: Չեղոք սեռի իմաստը նույն դեմքում և թվում նույնպես արտահայտվում է այդպիսի վերջավորությամբ, ուստի սեռային այդ իմաստով բառաձևը ոչ ամբողջական, այլ միայն վերջավորության համանունություն կունենա վերոհիշյալ կարգի բայերի հետ (հմմտ. վազեցալ, հասալ, ծիծաղեցալ, գնացալ, հեռացալ, զբօսալ և ալլն):

Նույն վիճակում են նաև երկրորդ ապառնի ժամանակի հոգնակի թվի առաջին ու երկրորդ դեմքերի վերջավորությունները և նրանցով կազմվող բառաձևերը: Օրինակ՝ առաքեսցուլ, առաքեսցիլ, ամացցուլ, ամացցիլ, ընկեսցուլ, ընկեսցիլ և նման բազմաթիվ բառաձևեր նույնությամբ, բայց սեռային տարբեր իմաստներով տեղ են գրավում հարացույցի թե՛ ներգործաձև և թե՛ կրավորաձև բաժիններում: Ուրեմն՝ որպես բառաձևեր համանուն են:

Գրաբարի խոնարհման համակարգում համանունություն է նկատվում նաև տարբեր ժամանակա-եղանակային ձևերի զանազան բառաձևերում: Այսպես. ձևով համընկնում են և լծորդության հավասարահիմք մի քանի բայերի ներկա ժամանակի կրավորաձև խոնարհման եզակի երրորդ դեմքի ու անցյալ

կատարյալի ներդրածաձև խոնարհման առաջին դեմքի նույն թվի, ապա և հոգնակի թվի երրորդ դեմքի որոշ ձևեր: Հմմտ. ածի, բերի, հանի, հեղուսի՝ «բերվում է», «հանվում է», «գամվում է» (ներկա, 3-րդ դ., եզ. թ., կրավ.) և ածի, բերի, հանի, հեղուսի՝ «բերեցի», «հանեցի», «գամեցի» (անց. կատ., 1-ին դ., եզ. թ., ներգործ.), ածին, բերին, հանին, հեղուսին՝ «բերվում են», «հանվում են», «գամվում են» (ներկա, 3-րդ դ., հոգն. թ., կրավ.), ածին, բերին, հանին, հեղուսին՝ «բերեցին», «հանեցին», «գամեցին» (անց. կատ., 3-րդ դ., հոգն. թ., ներգործ.):

Վերջավորությունների համանունություն կա ներկա ժամանակի հոգնակի թվի երրորդ դեմքում և արգելական հրամայականի նույն դեմքում ու թրվում՝ բոլոր լծորդություններում: Համապատասխան բառաձևերում այդ համանունությունը հանդես է գալիս մասնակի բնույթով, որովհետև արգելականի մի՝ ևղանակիչը տարբերություն է առաջացնում հիշյալ բառաձևերի միջև: Հմմտ. սիրելի, սիրի, բազմի, ամայի, թողուի և մի՝ սիրելի, մի՝ սիրի, մի՝ ամայի, մի՝ թողուի:

Այլևայլ բառաձևերի հետ ձևային համընկումներ ունեն նաև բուն հրամայականի որոշ ձևեր: Այսպես, համանուն են անցյալ կատարյալի հոգնակի թվի երրորդ դեմքի (առաջնային) և հրամայականի նույն դեմքի ու թվի ձևերը: Հմմտ. անց. կատ. սիրեցի, տեսի, գնացի, հեղի, հրամ. սիրեցի՛, տեսի՛, գնացի՛, հեղի՛: Ներգործաձև խոնարհման մեջ նման դեպքերում տարբերություն գրեթե չի նկատվում: Իսկ կրավորաձև խոնարհման դեպքում կա սահմանափակում, որովհետև անց. կատարյալի այժմ վերջավորության դիմաց հրամայականում նույնպիսի վերջավորությունը կանոնավոր բայերում ընտիր չէ և քիչ է տարածված, և, ընդհակառակն, հրամայականի սովորական առում վերջավորության դիմաց անցյալ կատարյալում նույնպիսի վերջավորությունը շատ հազվադեպ է հանդիպում: Զուգադիպելիս, իհարկե, այստեղ ևս հանդես են գալիս համանուն բառաձևեր:

Համընկումներ կան նաև բուն հրամայականի եղակի թվի երրորդ և անցյալ կատարյալի նույն թվի երրորդ դեմքերում, հրամայականը կրավորաձև խոնարհմամբ, անցյալ կատարյալը՝ ներգործաձև, Հմմտ. անց. կատ. սիրեաց («սիրեց»), հրամ. սիրեա՛ց («սիրվի՛ր») կամ՝ պահեաց («պահեց»), պահեա՛ց («պահվի՛ր») և այլն:

Սակայն անցյալ կատարյալի և հրամայականի բառաձևերի համանունությունը պետք է ընդունել վերապահությամբ՝ նկատի ունենալով, որ հրամայականի ձևերը հաճախ սուր շեշտ են կրում և շեշտի բնույթով տարբերվում անցյալ կատարյալի համանման ձևերից:

Անցնենք արևելահայ գրականին: Այստեղ քերականորեն համանուն են վաղակատար դերբայի ել և ե լծորդության բայերի անորոշ դերբայի ել մասնիկները: Այդ համանունությունն առաջացել է հին հայերենի անցյալ դերբայի եալ մասնիկի պատմական ձևափոխության հետևանքով: Եթե այս ձևույթների դուրսգրությամբ ստացվում է համանունություն, ապա նույնը չի կարելի ասել դրանցով ձևավորվող բոլոր բառաձևերի մասին: Դրանց մեջ անխտիր լինում է հիշյալ ձևույթների համանունություն (հմմտ. անորոշ դ. գրել, գտնել, փախել, հիշեցնել, վաղակ. դ. գրել, գտնել, փախել, հիշեցրել, խաղացել), բայց դերբայի ձևային ամբողջական համընկում չի: Եթե միայն որոշ կարգի բայերի մեջ: Ըստ այդմ՝ ձևով համընկնում են ե

լծորդության սկզբնաձև ածանցադուրկ բայերի անորոշ ու վաղակատար դերբայները: Ինչպես՝ գրել, լսոսել, վագել ըստ ձևի և՛ անորոշ են, և՛ վաղակատար (տարբեր իմաստներով): Ձևային այսպիսի համընկումով կարող են լինել ածանցավոր բայերից բազմապատկականներն ու կրավորականները: Օրինակ՝ կտրատել, մորթոտել, կտրտել, գրվել, սիրվել, կտրատվել, մորթոտվել, կտրտվել և նման այլ ձևեր դերբայական տարբեր իմաստներով կարող են հանդես գալ որպես և՛ անորոշ, և՛ վաղակատար դերբայի ձևեր: Նույնաձևության պատճառն այստեղ նրանց հիմքերի տարբերության չեզոքացումն է: Դերբայների նույնաձևություն չի լինում հիմքի տարբերության դեպքում, ինչպես գտնել և գտել, փախչել և փախել, հիշեցնել և հիշեցրել զուգադրություններում:

Սակայն լեզուն ուսումնասիրողի համար շատ կարևոր է հիշյալ համանունության մեջ դերբայների տարբերումը: Տարբերման միջոցները կան հենց լեզվի մեջ, որոնք և պետք է հաշվի առնել: Նախ պետք է նկատի ունենալ, որ վաղակատար դերբայը օժանդակ բայի հարադրությամբ դիմավոր ձևեր է կազմում (գրել եմ, գրել էի և այլն), իսկ անորոշի համար այդ դերբայացառվում է (խոսքը չի վերաբերում բարբառներին): Դա կարելի է ստուգել հարացույցում՝ տարբերվող բայաձևերի զուգադրությամբ: Գրել եմ(էի), սլահել եմ(էի), գտել եմ(էի), փախել եմ(էի), գնացել եմ(էի) շարքերում հնարավոր չեն գտնել եմ(էի), փախչել եմ(էի), գնալ եմ(էի) ձևեր: Այսպիսով անորոշ դերբայը հոլովվում է և կարող է հոգ ընդունել, որոնք բացառվում են վաղակատարի համար: Անորոշը կարող է դառնալ նախադասության ուրույն անդամ, իսկ վաղակատարը (դիմավոր ձևերից դուրս)՝ ոչ և այլն:

Համանունություն ունեն անորոշ դերբայի սեռականն ու ասլառնի դերբայի հիմնական ձևը, քանի որ համընկնում են համապատասխան ձևայինները՝ ու՛րու: Այդ ձևայինները համաժին են, բայց շատ վաղուց տարբերակվել են իմաստով: Այնպես որ գրելու, հասնելու, կարդալու, հեռանալու ձևերի տակ մի դեպքում ունենք ապառնի դերբայ, մյուս դեպքում՝ անորոշի սեռական հոլով: Այդ համանուն ձևերը տարբերվում են ըստ իրենց դերի: Ապառնին հանդես է գալիս միայն դիմավոր ձևերի կազմում (գրելու եմ՝ էի, հասնելու եմ՝ էի, կարդալու եմ՝ էի և այլն): Մինչդեռ, ինչպես վերն էլ նշեցինք, անորոշ դերբայը գրական լեզվում զուրկ է այդ դերից: Անորոշի հանդեպ ապառնին զուրկ է հոլովվելու հնարավորությունից, դիմավոր ձևերից դուրս նախադասության ուրույն անդամ չի կարող լինել և այլն¹⁰: Գուցե ճիշտ լիներ սրանց ձևային համընկումը քննել որպես միջհարացուցային երկվայթ, քանի որ սրանցից մեկը մտնում է խոնարհման, մյուսը՝ տվյալ ձևով՝ հոլովման հարացույցի մեջ: Բայց այստեղ հաշվի առանք այդ միավորների խոսքիմասային ընդհանուր արժեքը:

Համանունություն ունեն ժխտական դերբայը և ըղձական եղանակի ապառնու եզակի թվի երրորդ դեմքի ձևերը, քանի որ առաջինը ե լծորդության բայերի համար ունի ի, իսկ ա լծորդության համար՝ ա մասնիկները՝ (չեմ, չէի...) գրի, հասնի, կարդա, հեռանա և այլն: Նույն ձևով են ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի վերջավորությունները՝ գրի, հասնի, կարդա, հեռանա: Այս համանունությունը սահմանափակվում է հարացույցում նր-

¹⁰ Ապառնի դերբայի և անորոշի սեռականի տարբերությունների մասին այլ աղբյուրներով խոսել ենք ավելի մանրամասն:

րանց գրաված տեղով ու այլ միավորների զուգակցումով: Այսպես. ժխտական դերբայը հանդես է գալիս միայն ժխտական խոնարհման դեպքում, պայմանական կամ ենթադրական եղանակի ժամանակային երկու ձևերի բոլոր դեմքերում, որին միշտ հարադրվում են նմ օժանդակ բայի ժխտական ձևերը՝ մի՛ քանի իմաստներով (դեմք, թիվ, ժխտում և այլն), որոնք չկան դերբայի մեջ: Ըղծական ապառնու հիշյալ ձևերը ինքնին դիմավոր ձևեր են, առհասարակ չեն զուգակցվում օժանդակ բայի հետ՝ ոչ՝ դրական, ոչ էլ ժխտական խոնարհման մեջ (ներանց ժխտական խոնարհումը լինում է չ մասնիկի կցումով՝ չգրի, չհասնի, չկարդա, չհեռանա): Ըղծականի միավորներն ունեն իրենց զուգահեռ հոգնակի ձևերը (գրեն, հասնեն, կարդան, հեռանան): Սրանք նախադասության մեջ կարող են լինել նախադասության ուրույն անդամ (ստորոգյալ), իսկ ժխտական դերբայը առանց օժանդակ բայի ժխտական ձևերի զուգակցության (դիմավոր ձևերից դուրս) զուրկ է այդպիսի կիրառությունից և այլն:

Ա լծորդության ածանցազուրկ բայերում ժխտական դերբայը և ըղծական ապառնու եզակի երրորդ դեմքը ձևով համընկնում են նաև նրանց եզակի հրամայականին՝ (չեմ, չէի...) կարդա, խաղա, աղա|| (նա) կարդա, խաղա, աղա|| (դու) կարդա, խաղա, աղա: Այս համանունությունն էլ սահմանափակվում է հարացուցային շարքերում բոլոր բառաձևերի զուգադրման պայմաններում (ըղծականը 3-րդ դեմքում է, հրամայականը՝ 2-րդ, նրանցից յուրաքանչյուրն ունի իր տարբեր հոգնակի ձևը, դերբայը միշտ օժանդակ բայի հետ է և այլն): Սակայն այստեղ էլ հրամայականի համար համանունությունը պետք է ընդունել վերապահությանմբ՝ նրա յուրահատուկ շեշտի պատճառով:

Ձևով համընկնում են բոլոր բայերի ըղծական եղանակի ապառնի ժամանակի հոգնակի երկրորդ դեմքը և արդելական հրամայականի բայական մասը՝ հոգնակի թվում: Հմմտ. մի կողմում՝ գրեմ, գտնեմ, քոչեմ, կարդամ, հեռանամ, մոտենամ և այլն, մյուս կողմում՝ մի՛ գրեմ, մի՛ գտնեմ, մի՛ քոչեմ, մի՛ կարդամ, մի՛ հեռանամ, մի՛ մոտենամ: Այսպես էլ՝ ա լծորդության բոլոր բայերի ըղծական ապառնու եզակի երրորդ դեմքն ու նույն թվի արդելականը՝ (նա) կարդա, հեռանա, մոտենա և մի՛ կարդա, մի՛ հեռանա, մի՛ մոտենա: Վերը նշված ուրիշ փաստերի նման սա էլ վերջավորությունների լրիվ համանունություն է, իսկ բառաձևերի կիսահամանունություն, քանի որ մի՛ եղանակիչը մտցնում է ձևային տարբերություն և սահմանափակում համանունությունը:

Հիմքի շեղոքացման պայմաններում ձևային համընկում են ստանում կատարյալի կրկնահիմք առանձին բայերի ցույցազուրկ հիմքով կազմված առաջին դեմքն ու ըղծականի ապառնու երրորդ դեմքը՝ եզակի թվում: Ինչպես՝ (ես) բերի (բերեցի), ասի (ասացի), հանի (հանեցի) և (նա) բերի, ասի, հանի: Սրանք էլ՝ որպես առանձին միավորներ՝ տարբերվում են ժամանակա-եղանակային և դիմային տարբեր իմաստներով ու զործածություններով, հարացուցային տարբեր տեղեքով, առաջինների ցույահիմք հիմնական ու հնարավոր ձևերով և այլն:

Այժմ՝ մի քանի խոսք միջհարացուցային համաձայնություն, այսինքն՝ խոսքիմասային տարբեր հարացույցների միավորների ձևային համընկնումների մասին: Այստեղ էլ կարող են լինել համանուն ձևությունների և նրանցով

կազմվող բառաձևերի, ինչպես նաև տարբեր հիմունքներով կազմվող բառաձևերի համընկումներ։ Օրինակ՝ գրաբարում անցից, մտից բառաձևերը կարող են տեղ գրավել հոլովման ու խոնարհման հարացույցներում՝ անցից՝ որպես անցի բառաձևի սեռական և տրական, անցից՝ որպես անցանել բայի երկրորդ ապառնու եզակի առաջին դեմք, մտից՝ մոտի բառի սեռական և տրական, մտից՝ մտանել բայի երկրորդ ապառնի և այլն։ Բայն ունի ից դիմացին վերջավորությունը, գոյականը՝ միմյանց միացած հոլովական ի և ց մասնիկները։ Ելից բառաձևը կարող է տարբեր տեղեր գրավել թե՛ հոլովման և թե՛ խոնարհման հարացույցներում։ Այսպես. ելից՝ հոգնակի սեռական, տրական՝ ել արմատով և ի, ց մասնիկներով, ելից երկրորդ ապառնի, եզ. թ. առաջին դեմք՝ Ելանել բայի ել հիմքով և ից վերջավորությամբ, ելից՝ անց. կատ., եզ. թ., երրորդ դեմք՝ լնուլ բայի լից հիմքով, զրո վերջավորությամբ և ե նախահավելվածով (վանկային աճեցումով)։ Սա, իհարկե, տարբեր բառերի ձևերի տեսքային զուգադիպություն է։

Ժամանակակից արևելահայ գրականում (և ոչ միայն այստեղ) գոյակառնակազմ է լծորդության շատ բայերի ըղձական ապառնու եզակի թվի երրորդ դեմքը միշտ համանուն է լինում նրանց հիմքում ընկած գոյականների սեռական և անորոշ տրական հոլովաձևերին։ Ինչպես՝ (նա) զրի, ջրի, ծեփի, նաշի, ծխի, ֆնի, կազմի, խնդրի, ներկի, գործի, փորձի, ճորի, երգի, ներկի, վարի, լարի, կերակրի, դարմանի, բժշկի, ապտակի, ծիծաղի, սանրի, ասֆալտի, բետոնի, ցեմենտի և այլն, և այլն։ Մյուս կողմից՝ այս բոլորը կարող են լինել համապատասխան գոյականների հոլովաձևեր։ Ինչպես՝ ջրի կաթիլ, նաշի համ (սեռական), հրավիրել նաշի, գնալ ջրի (տրական) և այլն։ Իմաստային տարբերությունները որոշվում են ըստ խոսքիմասային իմաստների, ըստ քերականական կարգերի արտահայտման (մի կողմում՝ բայիմաստներ, բայական կարգեր, մյուս կողմում՝ առարկայական իմաստ, գոյականական կարգեր), ըստ կապակցելիության (մի կողմում՝ բայ+գոյական, մյուս կողմում՝ գոյական+գոյական), ըստ հարացույցային տեղի (մի կողմում՝ բայի դիմավոր ձևերի շարք, մյուսում՝ հոլովների) և այլն։ Այս ձևալին համընկումը առաջացել է բայի դիմացին երբեմնի է վերջավորության՝ ի-ի վերածվելով։ Հիշենք նաև, որ այսպիսի ձևերը իրենց հերթին համընկնում են ժխտական դերբային, որի մասին խոսվեց վերը։

Նկատվում է մի այսպիսի երևույթ. եթե համապատասխան գոյականը միավանկ է, ապա հոգնակի ձևը անորոշ առումով (որպես անորոշ ուղղականի և հայցականի ձև) համանունություն է ունենում իրենով կազմված բայի ըղձական անցյալ ապառնու եզակի երրորդ դեմքի հետ (եթե, իհարկե, չի խանգարում հոգնակի ձևի բացակայության կամ հնչյունափոխության հանդամանքը)։ Այսպես. մի կողմում ունենք («Եթե, երանի... նա») նաշեր, ծեփեր, ջրեր, ներկեր, երգեր, լարեր, կազմեր...», մյուս կողմում՝ «Համեղ նաշեր են պատրաստվել», «Նա համեղ նաշեր է պատրաստում», «Շատ ջրեր են հոսել», «Հանքային շատ ջրեր եմ փորձել» և այլն, և այլն։ Դա հնարավոր չէ բազմավանկ գոյականների դեպքում, որովհետև սրանց վերջավորությունը տարբերվում է (կունենանք ապտակեր, խնդրեր, բժշկեր բայաձևեր և այլն, մինչդեռ գոյականների ձևերը կլինեն ապտակներ, խնդիրներ, բժիշկներ)։ Իսկ, այսպես կոչված, «մեկուկես վանկանի» բառերում հնարավոր է։ Օրինակ՝ սանրեր (բայ), սանրեր (գոյական)։

Համանուն են անկատար դերբայի առաջին տարբերակի և անվանական հոլովման ներգոյականի ձևույթները: Այդ պատճառով ձևով համընկնում են անվանական շատ բայերի անկատար դերբայն ու համապատասխան բառերի ներգոյական հոլովածեր: Ինչպես՝ խնդրում (եմ՝ էի...) և խնդրում-«խնդրի մեջ», հորում (եմ՝ էի...) և հորում-«հորի մեջ», փորձում (եմ՝ էի...) և փորձում-«փորձի մեջ» և այլն: Այսպիսի ձևերի տարբերումը հեշտանում է նրանով, որ ում ձևույթով անկատար դերբայը միշտ վերլուծական դիմավոր ձևերի կազմիչ մաս է և հանգես է գալիս օժանդակ բայի ձևերի հարադրությամբ ու այդպիսով մտնում է բայական հարացուցային ձևերի մեջ, բայական իմաստ ու բային հատուկ քերականական այլ արժեքներ ունի: Առանձնակի նախադասության անդամ չի դառնում: Ներգոյական գոյականի (տրվյալ դեպքում) հարացուցի միավոր է, ունի առարկայական իմաստ, գուդահեռ հոգնակի ձև, հակադրվում է մյուս հոլովածներին, նախադասության մեջ ուրույն անդամ է դառնում և այլն: Այստեղ էլ բառաձևերը լիակատար համանուն չեն, որովհետև ներգոյական հոլովն իբրև հարացուցային անդամ անկախ է և ունի նաև հոգնակի ձև: Մինչդեռ անկատար դերբայի համապատասխան ձևը հարացուցում տեղադրվում է միայն օժանդակ բայի հարադրությամբ և իր ում ձևույթից հետո հոգնակիության մասնիկ չի կարող ընդունել:

Մենք քերականական համանունության երևույթը շոշափեցինք միայն գրաբարի և ժամանակակից արևելահայ գրական լեզվի ձևաբանության սահմաններում, այն էլ ընդհանուր գծերով: Միանգամայն հասկանալի է, որ ամբողջ հայերենում այն ավելի ծավալուն բնույթ կունենա: Էլ չենք խոսում շարահյուսական համանունության մասին:

Վերջում ընդգծենք, որ ձևային համընկումների ուսումնասիրությունն ինքնաբերական չէ, այլ նպաստում է քերականական տարբեր հասկացությունների ճիշտ ընկալմանն ու զնահատմանը:

К ГРАММАТИЧЕСКОЙ ОМОНИМИИ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Доктор филологич. наук А. А. АБРААМЯН

(Резюме)

Изучение омонимии в языке один из важнейших вопросов языкознания. Обычно различают некоторые типы омонимии—лексические, грамматические и т. д. Грамматической омонимией считается внешнее совпадение разнозначных грамматических аффиксов. Факты армянского языка дают основание различать омонимию грамматических аффиксов и словоформ. Грамматические аффиксы реализуются в словоформах, где хорошо воспринимаются их значения.

Грамматическая омонимия армянского языка в статье исследуется по разным парадигмам, причем это явление представляется как внутрипарадигматическое и межпарадигматическое. Под внутрипарадигматической омонимией мы понимаем внешнее совпадение разных единиц одной парадигмы (склонения или спряжения). Межпарадигматическая же омонимия — это совпадение единиц разных парадигм (совпадение единиц склонения с единицами спряжения и т. д.).